

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԹԻՎ 22/07-001

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման կանոններ»-ը հաստատելու մասին


28 հուլիսի 2022թ.

Ղեկավարվելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2014թ. հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման եվ ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի 4-րդ կետի 1-ին ենթակետով և 6-րդ կետով, ինչպես նաև «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ կանոնադրության 10.15. կետով՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման կանոններ»-ը նոր խմբագրությամբ համաձայն հավելված 1-ի:
2. Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար Հայկ Մանասեյանին և ընկերության աշխատակից Արաքսյա Հարությունյանին հանձնարարել մինչև 04.08.2022թ-ը սույն որոշման մասին տեղեկացնել ընկերության բոլոր աշխատակիցներին և սույն որոշումը ներկայացնել Հայաստանի կենտրոնական բանկին:
3. Ընկերության աշխատակից Ռուզաննա Սարգսյանին հանձնարարել մինչև 04.08.2022թ-ը սույն որոշումը հրապարակել ընկերության պաշտոնական կայքում:
4. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ

Գլխավոր տնօրեն


Արամ Կախաճյան



«ԱՐՄԲՐՈԿ»

բաց բաժնետիրական ընկերության

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Կանոններում օգտագործվող հասկացությունները.....	4
2. Ներքին դիտարկումների մարմինը	4
3. Ներքին դիտարկումների մարմնի և այլ աշխատակիցների աշխատանքի ընդունումը, ուսուցումը և վերապատրաստումը	7
4. Ռիսկերի կառավարումը.....	8
5. Հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ և պարզեցված) ուսումնասիրությունը և տեղեկությունների պահպանումը	12
6. Գործարքների կամ գործարար հարաբերությունների մասին տեղեկությունների հավաքագրումը, գրանցումը և պահպանումը.....	22
7. Գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելի որակումը.....	22
8. Կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների կասեցումը	24
9. Գործարքների կամ գործարար հարաբերությունների իրականացման մերժումը կամ դադարեցումը.....	26
10. Ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը	26
11. Լիազոր մարմնին հաշվետվությունների տրամադրումը	27
12. Արգելված գործողությունները	28
13. Աուդիտի իրականացումը	29

«ԱՐՄԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման կանոնները (այսուհետ՝ Կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան և կարգավորում են Ընկերության միջոցով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ընթացակարգերը:

Կանոնները պետք է վերանայվեն Ընկերության գործունեության միջավայրի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

1. Կանոններում օգտագործվող հասկացությունները

- 1.1. Կանոններում օգտագործվող հասկացությունները մեկնաբանվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:
- 1.2. Կանոնների իմաստով իրավասու մարմինը Ընկերության տնօրենների խորհուրդն է, իսկ Ընկերությունում տնօրենների խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում՝ գործադիր մարմինը:

2. Ներքին դիտարկումների մարմինը

- 2.1. Ներքին դիտարկումների մարմնի գործառույթն իրականացնում է Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանումը՝ Ընկերության «ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության կանոնակարգ»-ով սահմանված կարգով:
- 2.2. Ներքին դիտարկումների մարմինը Օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված գործառույթներն իրականացնելիս անկախ է և ունի Ընկերության ավագ ղեկավարության կարգավիճակ:
- 2.3. Ներքին դիտարկումների մարմինը.
 - 2.3.1. ապահովում է Ընկերության անունից լիազոր մարմնին տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև Ընկերության կապը լիազոր մարմնի հետ,
 - 2.3.2. կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ,
 - 2.3.3. պահպանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացված վերլուծությունների արդյունքները,
 - 2.3.4. ապահովում է հաճախորդի և գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատումը,
 - 2.3.5. գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված

- անձանց գույքը սառեցնելու հարցը, ըստ անհրաժեշտության, քննարկում է ներքին ազդակ տրամադրած համապատասխան աշխատակցի հետ,
- 2.3.6. վերջնական որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ,
- 2.3.7. Իրականացնում է Կանոնների 4.2-4.3 կետերում նշված գնահատումները և դրանց հիման վրա առաջարկություններ է ներկայացնում Ընկերության իրավասու մարմինին:
- 2.3.8. Վերանայում է Կանոնները և դրանցում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում փոփոխությունների նախագիծ է ներկայացնում Ընկերության իրավասու մարմինին:
- 2.3.9. իրականացնում է Օրենքով, Կանոններով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:
- 2.4. Ներքին դիտարկումների մարմինը կարող է՝
- 2.4.1. մշակել ներքին իրավական ակտեր, դրանք ներկայացնել գործադիր մարմնի հաստատմանը,
- 2.4.2. իրականացնել ներքին իրավական ակտերի արդյունավետության մոնիտորինգ, ներկայացնել առաջարկներ դրանց բարելավման վերաբերյալ,
- 2.4.3. իրականացնել գործադիր մարմնի հանձնարարած այլ գործառույթներ այնքանով, որքանով դա չի սահմանափակում ներքին դիտարկումների մարմնի անկախությանը:
- 2.5. Ներքին դիտարկումների մարմինը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հետ կապված գործառույթների իրականացման հարցում պետք է օժանդակի և խորհրդատվություն տրամադրի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցներին:
- 2.6. Ներքին դիտարկումների մարմինն իրավունք ունի Ընկերության իրավասու մարմինն անմիջականորեն ներկայացնելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ծագած խնդիրները, ինչպես նաև մասնակցելու այդ մարմնի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն առնչվող հարցերի քննարկմանը:
- 2.7. Ներքին դիտարկումների մարմինը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ պետք է ուսումնասիրի Ընկերության կատարած գործարքների և հաստատած գործարար հարաբերությունների, կառուցվածքային ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը Օրենքին և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերին: Ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ ներքին դիտարկումների մարմինը հաշվետվություն է ներկայացնում Ընկերության իրավասու մարմինին:

- 2.8. 2.7. կետով սահմանված՝ Ընկերության իրավասու մարմինն ներկայացվող ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը պետք է նվազագույնը ներառի՝
- 2.8.1. պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը, կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,
 - 2.8.2. այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն որակվել կասկածելի,
 - 2.8.3. Ընկերության կասեցրած, իրականացումը մերժած կամ դադարեցրած գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը, յուրաքանչյուր կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության արժեքը,
 - 2.8.4. սառեցված գույքի չափը,
 - 2.8.5. Ընկերության աշխատակիցների գործողությունների արդյունքում Օրենքի, Կանոնների և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքերը,
- 2.9. Ներքին դիտարկումների մարմինը գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ իր կայացրած որոշման մասին կարող է տեղեկացնել գործադիր մարմնին, միայն կասկածելի որակված գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը լիազոր մարմնին տրամադրելուց, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցները կամ այլ գույքը սառեցնելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:
- 2.10. Ներքին դիտարկումների մարմինը և հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումները կամ աշխատակիցները պետք է մշտապես համագործակցեն՝ իրականացնելով հետևյալ գործողությունները.
- 2.10.1. Ներքին դիտարկումների մարմինը պետք է պարբերաբար հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումների կամ աշխատակիցների համար կազմակերպի դասընթացներ և սեմինարներ՝ վերջիններիս ծանոթացնելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում առկա նորությունների, այդ թվում՝ տիպաբանությունների հետ,
 - 2.10.2. Ներքին դիտարկումների մարմինը պետք է հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումներին կամ աշխատակիցներին մշտապես ապահովի միավորված ազգերի կազմակերպության կամ լիազոր մարմնի հրապարակած չհամագործակցող երկրների կամ ահաբեկչության հետ կապված անձանց վերջին ցանկերով,

- 2.10.3. հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումները կամ աշխատակիցները պետք է ներքին դիտարկումների մարմնի առաջին իսկ պահանջով վերջինիս տրամադրեն հաճախորդների, նրանց գործարքների և գործարար հարաբերությունների վերաբերյալ իրենց մոտ առկա ցանկացած փաստաթուղթ և իրենց հայտնի ցանկացած տեղեկություն:
- 2.10.4. հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումները կամ աշխատակիցները պետք է բարեխղճորեն կատարեն Կանոնների 7.7., 11.5. և 11.6. կետերով իրենց վրա դրված պարտականությունները:

3. Ներքին դիտարկումների մարմնի և այլ աշխատակիցների աշխատանքի ընդունումը, ուսուցումը և վերապատրաստումը

- 3.1. Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցները աշխատանքի են ընդունվում ընկերության «ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության կանոնակարգ»-ով և «Աշխատանքային ներքին կարգապահական կանոններ»-ով սահմանված կարգով, իսկ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն առնչվող այլ աշխատակիցները՝ «Աշխատանքային ներքին կարգապահական կանոններ»-ով սահմանված կարգով:
- 3.2. Օրենքով, Կանոններով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված գործառույթները պատշաճ իրականացնելու նպատակով Ընկերության ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը պետք է ունենա բարձրագույն կրթություն կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական և նշանակմանը նախորդող 10 տարիների ընթացքում առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ (ֆինանսական ոլորտում կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում):
- 3.3. Ներքին դիտարկումների մարմնի աշխատակից չի կարող լինել այն անձը, ով օրենքով սահմանված կարգով՝
- 3.3.1. ունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործության համար,
 - 3.3.2. դատարանի կողմից զրկված է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական կամ իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,
 - 3.3.3. սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ,
 - 3.3.4. ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված է որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,
 - 3.3.5. չի համապատասխանում սույն կանոնների 3.2. կետով սահմանված չափանիշներին:
- 3.4. Սույն կանոնների 3.2. և 3.3. կետերով նախատեսված տեղեկությունները ներկայացվում են լիազոր մարմնի սահմանած «Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի վերաբերյալ» հայտարարագրով (այսուհետ՝ Հայտարարագիր), որը

Ընկերությանն է ներկայացվում ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պաշտոնում նշանակվելուց առաջ: Հայտարարագրով ներկայացված տեղեկությունների հավաստիությունը կարող է ստուգվել օրենքով չարգելված ցանկացած եղանակով:

- 3.5. Ընկերության՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինասավորման կանխարգելմանն առնչվող բոլոր աշխատակիցները պետք է իրազեկ լինեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինասավորման դեմ պայքարի օրենսդրությանը, այլ իրավական ակտերին (հատկապես հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտականությունների մասով), ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինասավորման առկա ռիսկերին և տիպաբանություններին:
- 3.6. 3.5. կետում նշված պահանջի կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը պետք է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով պարբերաբար ուսուցում կազմակերպի խորհրդի, գործադիր մարմնի, ներքին դիտարկումների մարմնի, հաճախորդների սպասարկման և ներքին աուդիտի գործառույթներ իրականացնող, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների համար:
- 3.7. 3.6. կետով նախատեսված նոր աշխատակիցների համար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով ուսուցումը պետք է կազմակերպվի աշխատանքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:
- 3.8. Ընկերության իրականացրած ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը պետք է հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 տարի ժամկետով:

4. Ռիսկերի կառավարումը

- 4.1. Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է հետևյալ երկու փուլերով.
 - 4.1.1. Ռիսկերի գնահատում,
 - 4.1.2. Ռիսկերի հակազդմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- 4.2. Ընկերությունը պետք է պարբերաբար, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ գնահատի իր՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերը և դրանց զսպմանն ուղղված միջոցառումները և դրա հիման վրա մշակի (վերանայի) բացահայտված ռիսկերի արդյունավետ կառավարման և զսպման իր քաղաքականությունը, վերահսկման մեխանիզմները և ընթացակարգեր:
- 4.3. Ընկերությունը, ի թիվս փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման այլ ռիսկերի, պետք է բացահայտի և գնահատի ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա

ռիսկերը, ընդ որում դա պետք է իրականացվի մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:

- 4.4. 4.2 կետում նշված գնահատումը պետք է առնվազն ներառի ռիսկի հետևյալ բաղադրիչները.
 - 4.4.1. Հաճախորդի ռիսկ,
 - 4.4.2. Ծառայության կամ ֆինանսական գործիքի ռիսկ,
 - 4.4.3. Ֆինանսական կապուղու ռիսկ,
 - 4.4.4. Աշխարհագրական ռիսկ:
- 4.5. 4.2 կետում նշված գնահատումը պետք է առնվազն ներառի ռիսկերի զսպման հետևյալ միջոցառումները.
 - 4.5.1. Գործարքների մոնիտորինգ,
 - 4.5.2. Հաճախորդների պատշաճ նույնականացում,
 - 4.5.3. Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց նույնականացում,
 - 4.5.4. Գործարքների դիտանցում չթույլատրված գործարքների հետ համընկնում բացահայտելու նպատակով,
 - 4.5.5. Անունների դիտանցում բացասական ազդակ պարունակող տեղեկատվության հետ համընկնում բացահայտելու նպատակով,
 - 4.5.6. Աշխատակիցների ուսուցում,
 - 4.5.7. Գործընթացների կառավարում,
 - 4.5.8. Ղեկավարությանը տեղեկատվության տրամադրում:
- 4.6. 4.2 և 4.3 կետերում նշված գործողությունների արդյունքները պետք է փաստաթղթավորվեն և պահպանվեն Կանոնների 5.29-5.33 կետերով սահմանված կարգով:
- 4.7. Հաճախորդի ռիսկը գնահատվում է որպես միջին (ստանդարտ), բարձր կամ ցածր: Ռիսկը գնահատվում է ըստ ռիսկը բնութագրող չափանիշի, իսկ մեկից ավելի չափանիշների առկայության դեպքում՝ դրանց համակցությամբ: Ռիսկի չափանիշները սահմանվում են Օրենքով, Կանոններով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:
- 4.8. Ռիսկը գնահատվում է միջին (ստանդարտ) այն դեպքում, երբ բացակայում են բարձր կամ ցածր ռիսկի չափանիշները՝ բացառությամբ Կանոնների 4.10.2. կետով նախատեսված դեպքի:
- 4.9. Ռիսկը գնահատվում է բարձր այն դեպքում, երբ առկա է բարձր ռիսկի թեկուզ մեկ չափանիշ՝ բացառությամբ Կանոնների 4.10.3. կետով նախատեսված դեպքի:
- 4.10. Ռիսկը գնահատվում է ցածր այն դեպքում, երբ.
 - 4.10.1. առկա են միայն ցածր ռիսկի չափանիշներ,
 - 4.10.2. առկա է միջին (ստանդարտ) ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է Կանոնների 4.14. կետով նախատեսված ցածր ռիսկի գործարք,

- 4.10.3. առկա է բարձր ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է Կանոնների 4.14. կետերով նախատեսված ցածր ռիսկի գործարք:
- 4.11. Տարբեր ռիսկերի համար բնութագրական մի քանի չափանիշների միաժամանակ առկայության դեպքում ռիսկը գնահատվում է առկա չափանիշներից առավել բարձր ռիսկայինին համապատասխան՝ բացառությամբ Կանոնների 4.10.2. և 4.10.3. կետերով սահմանված դեպքերի:
- 4.12. Հաճախորդի հետ գործարար հարաբերության ընթացքում ռիսկի որևէ նոր չափանիշ ի հայտ գալու դեպքում Ընկերությունը պետք է վերանայի տվյալ ռիսկի գնահատումը՝ ձեռնարկելով նոր որոշված ռիսկին համապատասխան հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ:
- 4.13. Բարձր ռիսկի չափանիշներ են.
- 4.13.1. իրավաբանական անձինք կամ կազմավորումները, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,
- 4.13.2. անվանական բաժնետերեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր ունեցող ընկերությունները,
- 4.13.3. կանխիկի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնեսները և գործարար հարաբերությունները,
- 4.13.4. սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ ունեցող ընկերությունները,
- 4.13.5. անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը,
- 4.13.6. առանց առերես շփման գործարքը կամ գործարար հարաբերությունը,
- 4.13.7. քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ) կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները,
- 4.13.8. անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից են,
- 4.13.9. հաճախորդներ, որոնց հաշիվներով իրականացվում են միջոցների հաճախակի և անբացատրելի շարժեր դեպի տարբեր ֆինանսական հաստատություններ,
- 4.13.10. հաճախորդներ, որոնց կողմից իրականացվող գործարքների և/կամ գործարար հարաբերությունների կառուցվածքը կամ բնույթը դժվարեցնում է իրական շահառուի բացահայտումը,
- 4.13.11. կանխիկի վրա հիմնված գործունեություն իրականացնող հաճախորդներ, ներառյալ՝ դրամական ծառայություններ մատուցող հաճախորդները (օրինակ՝ դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ, փոխանակման կետեր), խաղատներ, շահումով խաղ կազմակերպող անձինք, կամ հաճախորդներ, որոնց գործունեությունը սովորաբար հիմնված չէ կանխիկի վրա, սակայն վերջիններս որոշակի գործարքների համար օգտագործում են կանխիկի զգալի ծավալներ,

- 4.13.12. շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ,
- 4.13.13. հաշվապահներ, իրավաբաններ կամ այլ նմանատիպ գործունեություն իրականացնող մասնագիտացված անձինք, որոնք սպասարկվում են ֆինանսական հաստատություններում և գործում են իրենց հաճախորդների անունից,
- 4.13.14. միջնորդներ (ֆինանսական և ոչ ֆինանսական), որոնց գործունեությունը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրությամբ չի կարգավորվում,
- 4.13.15. ըստ ներկայացնողի արժեթղթերից, այդ թվում ըստ ներկայացնողի չեկային գրքույկներից օգտվող հաճախորդներ:
- 4.13.16. բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն:
- 4.14. Ցածր ռիսկի չափանիշներ են.
 - 4.14.1. Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքի բյուջե կատարվող վճարումները,
 - 4.14.2. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,
 - 4.14.3. պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, պետական կառավարչական հիմնարկները, բացառությամբ չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինների կամ կազմակերպությունների:
- 4.15. Ընկերությունը ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման ընթացքում հաշվի է առնում ռիսկերի գործոնները, որոնք բնութագրական են առանձին հաճախորդի կամ գործարքի համար և կարող են ազդել դրանց գծով ռիսկերի ենթադրվող մակարդակի որոշման վրա: Դրանց թվին են պատկանում.
 - 4.15.1. հաճախորդի գործարար բնութագիրը,
 - 4.15.2. հաճախորդի հաշվի նպատակը կամ գործարար հարաբերության տեսակը,
 - 4.15.3. կոնկրետ հաճախորդի կողմից հաշվին ներդրվող միջոցների ծավալը կամ իրականացվող գործարքի գումարը,
 - 4.15.4. կարգավորման, կառավարման կամ վերահսկողական համակարգը, որի ներքո գործում է հաճախորդ ֆինանսական հաստատությունը,
 - 4.15.5. գործարար հարաբերության տևողությունը և կանոնակարգվածությունը,
 - 4.15.6. երկրի հետ ծանոթ լինելու հանգամանքը, որը ներառում է տվյալ երկրի օրենքների, կանոնակարգերի և կանոնների իմացությունը,
 - 4.15.7. միջնորդ իրավաբանական անձանց կամ կառույցների օգտագործումը, որոնք չունեն ակնհայտ տնտեսական նպատակ կամ այլ տրամաբանական հիմնավորում կամ անհարկիորեն բարդացնում են գործարքը/գործարար հարաբերությունը և հանգեցնում են թափանցիկության բացակայությանը,

- 4.16. Ռիսկերի կառավարման նպատակով ընկերությունում կիրառվում են հետևյալ ընթացակարգերը.
- 4.16.1. յուրաքանչյուր հաճախորդի ժամանակին նույնականացում և ինքնության ստուգում,
 - 4.16.2. իրական շահառուի առկայությունը պարզելու համար անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում, և առկայության դեպքում՝ վերջինիս նույնականացում և ինքնության ստուգում,
 - 4.16.3. եթե հաճախորդի կողմից հանդես է գալիս լիազորված անձ, ապա նաև այդ անձի նույնականացում, ինքնության և հաճախորդի անունից հանդես գալու լիազորության ստուգում,
 - 4.16.4. հաճախորդի նյութական վիճակը և առևտրային գործունեությունը, ներառյալ՝ գործարքների ակնկալվող շրջանակը և բնույթը հասկանալու համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերում:
- 4.17. Ծառայությունների նոր տեսակների մատուցմամբ կամ դրանց մատուցման նոր եղանակների գործարկմամբ, նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառմամբ, հնարավոր և առկա ռիսկերի հակազդման (կառավարման) նպատակով այդ նոր ծառայությունների, մատուցման եղանակների կամ տեխնոլոգիաների ներդրման ընթացակարգերը պետք է քննարկվեն ներքին դիտարկումների մարմնի հետ և ներդրվեն միայն ներքին դիտարկումների մարմնի կողմից դրական կարծիք ստանալու պարագայում:
- 4.18. Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով առանց առերես շփման գործարար հարաբերություն հաստատելիս կամ գործարք կնքելիս Ընկերությունը պետք է.
- 4.18.1. պայմանագրերի կնքումը իրականացնի Ընկերության ներքին հսկողության համակարգի նկատմամբ պահանջների սահմանման կանոնակարգի 4-րդ կետով սահմանված ընթացակարգով,
 - 4.18.2. համոզվի, որ ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը և պատվերները ներկայացված են հաճախորդի կողմից՝ օգտագործելով իրավասու էլեկտրոնային հասցեների, էլեկտրոնային ստորագրության կամ ծածկագրերի մեխանիզմ:
 - 4.18.3. հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում պահանջի, որ վճարումները կատարվեն Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով սահմանված պահանջներին բավարարող ֆինանսական հաստատությունում հաճախորդի անվամբ բացված հաշվով:

5. Հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ և պարզեցված) ուսումնասիրությունը և տեղեկությունների պահպանումը

- 5.1. Բացառությամբ Կանոնների 5.35 կետով սահմանված դեպքի՝ Ընկերությունը պետք է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնի, երբ՝
- 5.1.1. հաստատվում է գործարար հարաբերություն,

- 5.1.2. կատարվում է միանգամյա գործարք (փոխկապակցված միանգամյա գործարքներ), որի գումարը հավասար է կամ գերազանցում է 400,000.00 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամը, եթե խստացնող այլ դրույթ սահմանված չէ օրենսդրությամբ,
- 5.1.3. կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող՝ նախկինում ձեռք բերված տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ,
- 5.1.4. կասկածներ են առաջանում փողերի վլացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ:
- 5.2. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացը ներառում է հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելը և նրա ինքնությունը ստուգելը, գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելը, ինչպես նաև գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը) ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը:
- 5.3. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունն իրականացվում է հետևյալ երկու փուլերով.
 - 5.3.1. Հաճախորդից փաստաթղթերի և տեղեկությունների ստացում,
 - 5.3.2. Հաճախորդից ստացված փաստաթղթերի և տեղեկությունների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ աղբյուրներից ստացված փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրում և հաճախորդի գործարար բնութագրի ձևավորում:
- 5.4. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության առաջին փուլը իրականացվում է Ընկերության՝ հաճախորդին անմիջականորեն սպասարկող աշխատակիցների կողմից, իսկ երկրորդ փուլը՝ ներքին դիտարկումների մարմնի կողմից:
- 5.5. Ընկերությունը կարող է հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատել կամ միանգամյա գործարք կատարել միայն հաճախորդի նույնականացման համար Կանոններով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո: Ընկերությունը կարող է Կանոններով նույնականացման համար պահանջվող տեղեկությունների հիման վրա հաճախորդի ինքնությունը ստուգել նաև գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կատարելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ, բայց ոչ ավելի, քան յոթնօրյա ժամկետում, եթե դա անհրաժեշտ է հաճախորդի հետ բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով և ընկերության ղեկավարներից որևէ մեկը կամ հաճախորդին անմիջականորեն սպասարկող աշխատակիցը անձամբ ճանաչում է հաճախորդին և երաշխավորում է, որ հաճախորդի կողմից բոլոր պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները կներկայացվեն:

- 5.6. Հաճախորդին նույնականացնելիս Ընկերությունը պետք է պարզի, թե արդյոք հաճախորդը հանդես է գալիս իր կամ այլ անձի անունից և (կամ) օգտին, ինչպես նաև պետք է՝
- 5.6.1. պարզի լիազորված անձի առկայությունը և առկայության դեպքում, Կանոններին համապատասխան, նույնականացնի լիազորված անձին, ստուգի նրա ինքնությունը և հաճախորդի անունից հանդես գալու նրա լիազորությունը,
 - 5.6.2. պարզի իրական շահառուի առկայությունը և առկայության դեպքում, Կանոններին համապատասխան, նույնականացնի իրական շահառուին ու ստուգի նրա ինքնությունը:
- 5.7. Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում Ընկերությունը հաճախորդի իրական շահառուին պարզելու նպատակով պետք է լիարժեք տեղեկատվություն ունենա այդ իրավաբանական անձի մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ:
- 5.8. Ընկերությունը հաճախորդին նույնականացնում և նրա ինքնությունը ստուգում է պետական իրավասու մարմնի և մասնագիտացված իրավասու կազմակերպությունների տված արժանահավատ ու վավեր փաստաթղթերի և այլ տեղեկությունների հիման վրա:
- 5.9. Ֆիզիկական անձ հաճախորդին, լիազորված անձին կամ իրական շահառուին նույնականացնելու նպատակով Ընկերությունը հաճախորդից պետք է պահանջի հետևյալ փաստաթղթերը.
- 5.9.1. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
 - 5.9.2. Անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում գրանցման համարը և ՀՎՀՀ-ն կամ համարժեք այլ համարները ներառող փաստաթղթ(եր)ի պատճեն(ներ)ը,
 - 5.9.3. Հայտարարություն իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ լիազոր մարմնի սահմանած ձևով,
 - 5.9.4. Գրություն բնակության և հաշվառման վայրի մասին, եթե դրանք նշված չեն ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
 - 5.9.5. Բնակության վայրը հաստատող փաստաթուղթ (կոմունալ կամ այլ ծառայության վճարման հաշիվ, բանկային հաշվից տեղեկանք, քաղվածք կամ ցանկացած այլ փաստաթուղթ, որում կերևա, որ հաճախորդը բնակվում է նշված հասցեում),
 - 5.9.6. Գրություն կենսական շահերի կենտրոնի մասին, եթե հաճախորդն օտարերկրյա անձ է և կենսական շահերի կենտրոնը նշված չէ ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
 - 5.9.7. Ընկերության որևէ ներքին իրավական ակտով պահանջվող ցանկացած այլ փաստաթուղթ,
 - 5.9.8. Ցանկացած այլ փաստաթուղթ, որը ներքին դիտարկումների մարմինը հարկ կհամարի պահանջել:

- 5.10. Իրավաբանական անձ հաճախորդին կամ լիազորված անձին նույնականացնելու նպատակով Ընկերությունը հաճախորդից պետք է պահանջի հետևյալ փաստաթղթերը.
 - 5.10.1. Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի վերջնական տարբերակի պատճենը,
 - 5.10.2. ՀՎՀՀ-ն կամ համարժեք այլ համարը ներառող փաստաթղթի պատճենը,
 - 5.10.3. Հիմնադիր փաստաթղթի վերջնական տարբերակի պատճենը,
 - 5.10.4. Առանց լիազորագրի հաճախորդի անունից հանդես գալու իրավասություն ունեցող ֆիզիկական անձանց ցանկը և նրանց նշանակումը հավաստող փաստաթղթերի պատճենները
 - 5.10.5. Հաճախորդի անունից լիազորագրի հիման վրա գործող լիազորված ֆիզիկական անձանց ցանկը և նրանց լիազորությունները հավաստող փաստաթղթերը կամ դրանց պատճենները,
 - 5.10.6. Հայտարարություն իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ լիազոր մարմնի սահմանած ձևով,
 - 5.10.7. Կանոնների 5.10.4-5.10.6 կետերում նշված անձանց համար Կանոնների 5.9. կետով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ 5.9.3 կետի,
 - 5.10.8. Հաճախորդի թողարկած բաժնային արժեթղթերի քսան և ավելի տոկոսին տիրապետող անձանց ցանկը,
 - 5.10.9. Գրություն կենսական շահերի կենտրոնի մասին, եթե հաճախորդն օտարերկրյա անձ է և կենսական շահերի կենտրոնը նշված չէ ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
 - 5.10.10. Ընկերության որևէ ներքին իրավական ակտով պահանջվող ցանկացած այլ փաստաթուղթ,
 - 5.10.11. Ցանկացած այլ փաստաթուղթ, որը ներքին դիտարկումների մարմինը հարկ կհամարի պահանջել:
- 5.11. Պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին հաճախորդին կամ լիազորված անձին նույնականացնելու նպատակով Ընկերությունը պետք է պահանջի հետևյալ փաստաթղթերը.
 - 5.11.1. Պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ պաշտոնական անվանումը և երկիրը ներառող գրություն,
 - 5.11.2. Ընկերության որևէ ներքին իրավական ակտով պահանջվող ցանկացած այլ փաստաթուղթ,
 - 5.11.3. Ցանկացած այլ փաստաթուղթ, որը ներքին դիտարկումների մարմինը հարկ կհամարի պահանջել:
- 5.12. Կանոնների 5.9-5.11. կետերում նշված փաստաթղթերի հիման վրա ներքին դիտարկումների մարմինը իրականացնում է հաճախորդի և նրա կողմից կնքվող գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատում, որից ելնելով որոշում է կայացնում հաճախորդի հետագա պատշաճ ուսումնասիրության

ընթացքում պարզեցված, հավելյալ կամ ստանդարտ ուսումնասիրության ընթացակարգերը կիրառելու մասին:

- 5.13. Միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում իրականացվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով սահմանված գործընթացը, որի շրջանակներում Ընկերությունը, ի կատարումն այդ կետով և Օրենքի համապատասխան այլ դրույթներով միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում սահմանված պահանջների, իրականացնում է գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության կանոնավոր միջոցառումներ:
- 5.14. Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով Ընկերությունը միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.
 - 5.14.1. ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարելով հարցումներ իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
 - 5.14.2. համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,
 - 5.14.3. պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,
 - 5.14.4. ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին,
 - 5.14.5. Հաճախորդի եկամուտների կամ ունեցվածքի օրինականության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում՝ պարզում է հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը,
- 5.15. Բարձր ռիսկի դեպքում իրականացվում է հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրության՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով սահմանված գործընթացը, որի շրջանակներում Ընկերությունը, ի կատարումն այդ կետով և Օրենքի համապատասխան այլ դրույթներով բարձր ռիսկի դեպքում սահմանված պահանջների, իրականացնում է գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության խորացված միջոցառումներ:
- 5.16. Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով Ընկերությունը բարձր ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ խորացված միջոցառումները.
 - 5.16.1. գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և

հավաստիությունը ստուգելիս պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր), օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմինների և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,

- 5.16.2. հաճախորդի՝ տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորին ավելի երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված,
- 5.16.3. հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով,
- 5.16.4. հաճախորդի գործարար բնութագրին որևէ գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը ստուգելիս պահանջում է դրանց շրջանակներում կատարված գործողությունները լիարժեքորեն հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),
- 5.16.5. հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելիս պահանջում է դրանց օրինականությունը հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր):
- 5.17. Ցածր ռիսկի դեպքում կարող է իրականացվել հաճախորդի պարզեցված պատշաճ ուսումնասիրության՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով սահմանված գործընթացը, որի շրջանակներում Ընկերությունը, ի կատարումն այդ կետով և Օրենքի համապատասխան այլ դրույթներով ցածր ռիսկի դեպքում սահմանված պահանջների, կարող է իրականացնել գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության նվազեցված միջոցառումներ:
- 5.18. Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով Ընկերությունը ցածր ռիսկի դեպքում կարող է ձեռնարկել հետևյալ նվազեցված միջոցառումները.
 - 5.18.1. ստուգել գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,
 - 5.18.2. համադրել հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,
 - 5.18.3. պարզել հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին

(ստանդարտ) կամ բարձր ռիսկայնության հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների հետ կապեր:

- 5.19. Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում դիտանցումը կատարվում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը), ընդ որում՝ Կանոնների 5.14.2, 5.14.3, 5.16.2 և 5.16.3 կետերով նախատեսված միջոցառումները պետք է ձեռնարկվեն ոչ ուշ, քան.
 - 5.19.1. տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
 - 5.19.2. վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում, բացառությամբ Կանոնների 5.23-րդ կետով նախատեսված դեպքի:
- 5.20. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկությունների (բացառությամբ հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների) թարմացումը կատարվում է ոչ ուշ, քան.
 - 5.20.1. տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
 - 5.20.2. վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում, բացառությամբ Կանոնների 5.23-րդ կետով նախատեսված դեպքի,
 - 5.20.3. երկու տարին մեկ անգամ՝ ցածր ռիսկի դեպքում:
- 5.21. Հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների թարմացումը կատարվում է տարին մեկ անգամ:
- 5.22. Ներպետական օրենսդրության նոր պահանջներն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ առկա հաճախորդների նկատմամբ պատշաճ ուսումնասիրության պահանջները կիրառվում են՝ ձեռնարկելով փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման համապատասխան ռիսկի համար նախատեսված միջոցառումները, հետևյալ դեպքերում և ժամկետներում.
 - 5.22.1. հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելու և նրա ինքնությունը ստուգելու, ինչպես նաև գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելու մասով՝ նոր պահանջներն ուժի մեջ մտնելուց հետո նախքան հաճախորդի հետ առաջին գործարքը կատարելը կամ Կանոնների 5.21-րդ կետով նախատեսված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկատվությունը հերթական անգամ թարմացնելիս, եթե մինչև հերթական թարմացումը հաճախորդի հետ գործարք չի կատարվել,
 - 5.22.2. գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը իրականացնելու մասով՝ նոր պահանջներն ուժի մեջ մտնելու պահից սկսած:
- 5.23. Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի «դ» ենթակետով սահմանված ընթացիկ հավելյալ դիտարկումն ընդգրկում է Կանոնների 5.16-րդ կետով նախատեսված միջոցառումները, որոնց

իրականացման՝ Կանոնների 5.19-րդ և 5.20-րդ կետերով նախատեսված պարբերականությունը պետք է լինի երեք ամիսը մեկ անգամ:

- 5.24. Հաճախորդի կողմից ներկայացված իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարությունը գործարար հարաբերության ընթացքում պետք է լրացվի նաև, երբ ի հայտ է գալիս իրական շահառու, կամ երբ իրական շահառուն փոխվում է:
- 5.25. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված գործողություններն իրականացնելիս Ընկերության համար կարող են հիմք ծառայել այլ ֆինանսական հաստատության կամ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները հետևյալ պայմանների բավարարման դեպքում՝
- 5.25.1. Ընկերությունը պետք է համապատասխան տեղեկությունները այլ ֆինանսական հաստատությունից կամ ոչ ֆինանսական հաստատությունից կամ անձից ստանա անմիջապես,
- 5.25.2. Ընկերությունը պետք է բավարար միջոցներ ձեռնարկի հավաստիանալու, որ այլ ֆինանսական հաստատությունը կամ ոչ ֆինանսական հաստատությունը կամ անձը՝
- 5.25.2.1. իրավասու է և կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, ներառյալ՝ փաստաթղթերի պատճենները,
- 5.25.2.2. փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից ենթակա է պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև ունի Օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և տեղեկությունների պահպանման արդյունավետ ընթացակարգեր,
- 5.25.2.3. չի գտնվում կամ բնակվում չհամապատասխանող երկրում կամ տարածքում կամ չհամապատասխանող երկրներից կամ տարածքներից չէ:
- 5.26. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով հաճախորդից ստացվող փաստաթղթերը և տեղեկությունները կարող են լինել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն: Վերոնշյալ լեզուներից տարբերվող լեզվով ներկայացվող փաստաթղթերը պետք է նոտարական կարգով թարգմանված լինեն հայերեն:
- 5.27. Օտարերկրյա անձանց կողմից հայերենից տարբերվող լեզվով ներկայացվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ապոստիլով կամ հյուպատոսական վավերացմամբ, եթե առանց ապոստիլի կամ հյուպատոսական վավերացման ներկայացնելու վերաբերյալ առկա չէ Ընկերության համաձայնությունը:
- 5.28. Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների հետ թղթակցային կամ համանման այլ հարաբերությունների ընթացքում Ընկերությունը, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրության համար Օրենքով և Կանոններով սահմանված պահանջների, պետք է՝

- 5.28.1. հավաքի բավարար տեղեկություններ, որպեսզի ամբողջությամբ պարզի օտարերկրյա ֆինանսական հաստատության գործունեության բնույթը և, հիմք ընդունելով հրապարակային ու այլ արժանահավատ տեղեկությունները, գնահատի հաստատության գործարար համբավն ու դրա նկատմամբ իրականացվող վերահսկողության որակը, ներառյալ այն, թե արդյոք այդ ֆինանսական հաստատությունը ներգրավված է եղել կամ տվյալ պահին ներգրավված է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված քրեական հետապնդման կամ որևէ այլ վարույթի մեջ,
- 5.28.2. գնահատի օտարերկրյա ֆինանսական հաստատության կողմից իրականացվող՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգերը, հավաստիանալու համար, որ դրանք բավարար են և արդյունավետ,
- 5.28.3. թղթակցային և համանման այլ հարաբերություն հաստատելուց առաջ ստանա ավագ ղեկավարության հավանությունը,
- 5.28.4. փաստաթղթավորի օտարերկրյա ֆինանսական հաստատություններից յուրաքանչյուրի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համապատասխան պարտականությունները, եթե դրանք հստակորեն հայտնի չեն,
- 5.28.5. հավաստիանա, որ տարանցիկ հաշիվների դեպքում օտարերկրյա ֆինանսական հաստատությունը՝
- 5.28.5.1. իրականացրել է ֆինանսական հաստատության հաշիվներին ուղղակի հասանելիություն ունեցող հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն և հարցման դեպքում կարող է տրամադրել այդ հաճախորդների պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները,
- 5.28.5.2. թույլ չի տալիս կեղծ բանկերի կողմից իր հաշիվների օգտագործումը:
- 5.29. Ընկերությունը պետք է պահպանի Օրենքով և Կանոններով պահանջվող, ներառյալ՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը)՝ անկախ նրանից, թե գործարքը կամ գործարար հարաբերությունը շարունակվում է, թե դադարեցվել է, այդ թվում՝
- 5.29.1. հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև գործարար թղթակցության տվյալները,
- 5.29.2. ներպետական և միջազգային գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները (ներառյալ՝ հաճախորդի (և գործարքի մյուս կողմի) անունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում) և բնակության (գտնվելու) վայրը, գործարքի բնույթը, կատարման ժամկետը, գումարը և արժույթը, առկայության դեպքում նաև՝ հաշվի տեսակը և հաշվեհամարը), որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի կամ գործարար հարաբերության ամբողջական պատկերը վերականգնելու համար,

- 5.29.3. Օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև կասկածելի չորակված գործարքների կամ գործարար հարաբերությունների դիտարկման ընթացքի (կատարված վերլուծության) և արդյունքների վերաբերյալ տեղեկությունները,
- 5.29.4. Կանոնների 4.2-4.3 կետերով նախատեսված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի գնահատման արդյունքները,
- 5.29.5. Օրենքով և Կանոններով սահմանված այլ տեղեկություններ:
- 5.30. 5.29 կետով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է պահպանվեն գործարար հարաբերության ավարտից կամ գործարքի կատարումից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով:
- 5.31. Օրենքով պահանջվող և Ընկերության կողմից պահպանվող տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է բավարար լինեն լիազոր մարմնի կամ, օրենքով սահմանված դեպքերում, քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից հարցվող հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ յուրաքանչյուր դեպքում ամբողջական ու լիարժեք տեղեկությունների տրամադրման համար:
- 5.32. Օրենքով և Կանոններով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) կարող են հավաքվել և պահպանվել թղթային կամ էլեկտրոնային եղանակով:
- 5.33. Օրենքով և Կանոններով սահմանված պահպանման ենթակա տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է հաշվառվեն: Հաշվառումը պետք է կատարվի այնպես, որ անհրաժեշտության դեպքում հնարավորություն լինի վերականգնել այն աշխատակցի տվյալները, ով իրականացրել է հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը կամ պահպանման ենթակա տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) ձեռքբերմանն ուղղված այլ գործողությունները:
- 5.34. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության Կանոններով սահմանված ընթացակարգերը չեն կիրառվում Ընկերության կողմից իր ընթացիկ գործունեության ապահովման նպատակով սեփական կարիքների համար կատարվող գործարքների (բացառությամբ ֆինանսական ակտիվների գնումների) դեպքերում:
- 5.35. Եթե հաճախորդը Ընկերության կողմից սահմանված ժամկետում Ընկերությանը չի ներկայացնում Կանոնների 5.20-5.21 կետերում նշված գործողությունների կատարման համար պահանջվող տեղեկությունները, ապա Ընկերությունն իրավունք ունի կասեցնել հաճախորդին ծառայությունների մատուցումը մինչև պահանջվող տեղեկությունների ներկայացումը:

6. Գործարքների կամ գործարար հարաբերությունների մասին տեղեկությունների հավաքագրումը, գրանցումը և պահպանումը

- 6.1. Գործարքների կամ գործարար հարաբերությունների մասին տեղեկությունների հավաքագրումն ու գրանցումն իրականացնում են Ընկերության հաճախորդներին անմիջականորեն սպասարկող կամ այդ գործարքներն անմիջականորեն իրականացնող աշխատակիցները, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցները:
- 6.2. Գործարքների կամ գործարար հարաբերությունների մասին տեղեկությունների հավաքագրումը կարող է իրականացվել ինչպես փաստաթղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակներով:
- 6.3. Գործարքների կամ գործարար հարաբերությունների մասին տեղեկությունները գրանցվում են ընկերությունում վարվող կամ ընկերության համար մշտապես հասանելի տեղեկատվական բազաներում:
- 6.4. Գործարքների կամ գործարար հարաբերությունների մասին տեղեկությունների պահպանման նկատմամբ տարածվում են Կանոնների 5.30-5.33 կետերի պահանջները:

7. Գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելի որակումը

- 7.1. Ընկերությունը գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, պետք է որակի որպես կասկածելի և Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրի լիազոր մարմնին, եթե կասկածում է կամ բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ, կամ օգտագործվել է, կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:
- 7.2. Ընկերությունը պետք է դիտարկի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու և Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրելու հարցն այն դեպքում, երբ դիտարկվող իրավիճակը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին, կամ Ընկերության համար ակնհայտ է դառնում, որ թեև կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներից կամ

տիպաբանություններից, դրա կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:

- 7.3. 7.2. կետով սահմանված դեպքերում, եթե դիտարկման արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակվում, և Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն չի տրամադրվում լիազոր մարմնին, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում ու պահպանվում են Օրենքով սահմանված կարգով և ժամկետում:
- 7.4. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը իրականացվում է ներքին դիտարկումների մարմնի կողմից՝ Օրենքով, Կանոններով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 7.5. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը սկսվում է ինչպես ներքին և արտաքին ազդակների ստացման դեպքում, այնպես էլ ներքին դիտարկումների մարմնի նախաձեռնությամբ, բոլոր այն դեպքերում, երբ.
 - 7.5.1. առկա է հնարավոր համընկնում հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկչության հետ կապված անձանց կամ լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև,
 - 7.5.2. դիտարկվող իրավիճակը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին,
 - 7.5.3. կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:
- 7.6. Ներքին ազդակներ են համարվում հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցների, Ընկերության կառավարման մարմինների, ներքին աուդիտի ստորաբաժանման, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների կողմից ներքին դիտարկումների մարմնին ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում փոխանցված ազդակները:
- 7.7. Ներքին ազդակները պետք է ներքին դիտարկումների մարմնին փոխանցվեն մինչև դրանց ի հայտ գալու աշխատանքային օրվա ավարտը:
- 7.8. Ներքին ազդակները ներքին դիտարկումների մարմնին կարող են փոխանցվել բանավոր կամ գրավոր կարգով, օգտագործելով կապի ցանկացած միջոց:

- 7.9. Արտաքին ազդակներ են համարվում լիազոր մարմնից, իրավասու մարմիններից, այլ հաշվետու անձանցից, օտարերկրյա գործընկերներից, ինչպես նաև տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից ստացված ազդակները:
- 7.10. Ներքին դիտարկումների մարմինը Կանոնների 7.5.1. կետով սահմանված այն դեպքերում, երբ առկա է հնարավոր համընկնում.
- 7.10.1. Ահաբեկչության հետ կապված անձանց նույնականացման տվյալների հետ, անմիջապես իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, Օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն և ձեռնարկում Օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված միջոցառումները,
- 7.10.2. լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների հետ, հանձնարարականներում նշված ժամկետներում իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, կատարում է հանձնարարականներով սահմանված գործողությունները:
- 7.11. Ներքին դիտարկումների մարմինը Կանոնների 7.5.2-7.5.3 կետերով սահմանված դեպքերում ողջամիտ ժամկետում կատարում է համակողմանի վերլուծություն՝ օգտվելով հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկատվությունից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է կատարում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ և եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը որակում է որպես կասկածելի, Օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև ձեռնարկում է Օրենքով նախատեսված այլ միջոցառումներ:

8. Կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների կասեցումը

- 8.1. Ընկերությունը փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում իրավունք ունի մինչև 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել լիազոր մարմնին:
- 8.2. Ընկերությունը Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հանձնարարականի ստացման դեպքերում պարտավոր է 5 օրով կասեցնել

գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել լիազոր մարմնին:

- 8.3. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի հանձնարարականը պետք է կատարվի անմիջապես՝ այն Ընկերության կողմից ստանալու պահից:
- 8.4. 8.1. կետերում նշված դեպքերում գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման վերաբերյալ ներքին դիտարկումների մարմինը ընդունում է որոշում, որի մեջ պարտադիր նշվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման ժամկետը: Այդ որոշման մասին ներքին դիտարկումների մարմինը տեղեկացնում է ընկերության գործադիր մարմնին:
- 8.5. Ներքին դիտարկումների մարմնի որոշման կամ լիազոր մարմնի հանձնարարականի հիման վրա ընկերության աշխատակիցները դադարեցնում են տվյալ գործարար հարաբերության շարունակմանը կամ գործարքի կատարմանն ուղղված ցանկացած գործողություն, և այդ մասին գրառում է կատարվում հաճախորդների հաշվառման գրանցամատյանում:
- 8.6. Ընկերության կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման մասին լիազոր մարմնին տեղեկացնելու կամ լիազոր մարմնի կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պահից 5 օրվա ընթացքում կասեցման ժամկետը երկարաձգելու կամ կասեցման որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի որոշումը չստանալու դեպքում կասեցման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած և կասեցումը դադարեցվում է, և այդ մասին գրառում է կատարվում հաճախորդների հաշվառման գրանցամատյանում:
- 8.7. Ընկերության կամ լիազոր մարմնի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչել միայն լիազոր մարմինը՝ իր նախաձեռնությամբ կամ Ընկերության միջնորդությամբ, եթե պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ:
- 8.8. Եթե պարզվում է, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ, ապա ներքին դիտարկումների մարմնի առաջարկությամբ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում լիազոր մարմնին՝ գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը մինչև կասեցման ժամկետի ավարտը վերացնելու մասին:
- 8.9. 8.8. կետում նշված միջնորդության հիման վրա կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը մինչև կասեցման ժամկետի ավարտը վերացնելու մասին լիազոր մարմնի որոշման հիման վրա Ընկերության ներքին դիտարկումների մարմինը կայացնում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը մինչև կասեցման ժամկետի ավարտը վերացնելու մասին որոշում, որի հիման վրա գործարքի կամ գործարար

հարաբերության կասեցումը դադարեցվում է, և այդ մասին գրառում է կատարվում հաճախորդների հաշվառման գրանցամատյանում:

9. Գործարքների կամ գործարար հարաբերությունների իրականացման մերժումը կամ դադարեցումը

- 9.1. Այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության Օրենքով և Կանոններով նախատեսված պարտականությունները, Ընկերությունը պետք է մերժի գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը և դիտարկի այն կասկածելի որակելու հարցը:
- 9.2. Ընկերությունը պետք է մերժի գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը և դիտարկի այն կասկածելի որակելու հարցը նաև Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման հանձնարարականի ստացման դեպքերում:
- 9.3. 9.1. կետերում նշված դեպքերում գործարքի կամ գործարար հարաբերության մերժման վերաբերյալ ներքին դիտարկումների մարմինը ընդունում է գրավոր որոշում: Այդ որոշման մասին ներքին դիտարկումների մարմինը տեղեկացնում է ընկերության գործադիր մարմնին:
- 9.4. Ներքին դիտարկումների մարմնի որոշման կամ լիազոր մարմնի հանձնարարականի հիման վրա ընկերության աշխատակիցները դադարեցնում են տվյալ գործարար հարաբերության շարունակմանը կամ գործարքի կատարմանն ուղղված ցանկացած գործողություն, և այդ մասին տեղեկացվում է հաճախորդը:

10. Ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը

- 10.1. Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում, ինչպես նաև Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ցանկերում ներառված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու ենթակա է սառեցման Ընկերության կողմից:
- 10.2. Հաճախորդի գույքի սառեցում կարող է իրականացվել նաև լիազոր մարմնի որոշման հիման վրա:
- 10.3. 10.1. կետերում նշված դեպքերում հաճախորդի գույքի սառեցման վերաբերյալ ներքին դիտարկումների մարմինը ընդունում է գրավոր որոշում: Այդ որոշման մասին ներքին դիտարկումների մարմինը տեղեկացնում է ընկերության գործադիր մարմնին:
- 10.4. Ներքին դիտարկումների մարմնի որոշման կամ լիազոր մարմնի որոշման հիման վրա հաճախորդի, նրա միջոցների և այդ միջոցների սառեցման մասին տվյալները գրանցվում են հաճախորդների հաշվառման գրանցամատյանում:

- 10.5. Ընկերությունն ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու դեպքում գործարքը կամ գործարար հարաբերությունը անմիջապես որակում է կասկածելի և տրամադրում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:
- 10.6. Սառեցման առարկա չի կարող լինել այն գույքը, որը պատկանում է բարեխիղճ երրորդ անձին, այսինքն՝ այն անձին, որը գույքը այլ անձի հանձնելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ դրանք օգտագործվելու են կամ նախատեսվում են օգտագործել հանցավոր, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով, ինչպես նաև այն անձին, որը գույքը ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ դրանք ստացվել են հանցավոր ճանապարհով:
- 10.7. Սառեցումը կարող է վերացվել միայն լիազոր մարմնի կողմից՝ գույքը սխալմամբ սառեցվելու, ինչպես նաև քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից սառեցված գույքի վրա կալանք դնելու դեպքում: Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում նշված անձանց գույքի սառեցումը նաև վերացվում է, եթե բացահայտվում է, որ այն անձը, որի միջոցները սառեցվել են, հանվել է ահաբեկչության հետ կապված անձանց ցանկից:
- 10.8. Սառեցման վերացման մասին գրառում է կատարվում հաճախորդների հաշվառման գրանցամատյանում:

11. Լիազոր մարմնին հաշվետվությունների տրամադրումը

- 11.1. Ընկերությունը լիազոր մարմին հաշվետվություն է ներկայացնում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության և (կամ) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ:
- 11.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվում է անկախ դրանում ներգրավված գումարի չափից:
- 11.3. Լիազոր մարմնի կողմից այլ բան սահմանված չլինելու դեպքում պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվում է հետևյալ գործարքների համար.
 - 11.3.1. Անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն դրամը,
 - 11.3.2. Կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն դրամը:
- 11.4. Ընկերությանը, նրա աշխատակիցներին և ներկայացուցիչներին արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություններ են տրամադրվում լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկությունների տրամադրման փաստի մասին:
- 11.5. Ընկերության հաճախորդներին սպասարկող աշխատակիցը գործարար հարաբերություններում կամ գործարքներում Օրենքով, լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցներով կամ Կանոններով նկարագրված չափանիշներին կամ

տիպաբանություններին համապատասխան կամ իր կարծիքի հիման վրա փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածների բացահայտման դեպքում այդ մասին մինչև գործարքի կատարման օրվա ավարտը բանավոր կարգով պետք է հայտնի ներքին դիտարկումների մարմնին՝ միաժամանակ ներկայացնելով այն հիմքերն ու պատճառները, որոնցից ելնելով ինքը տվյալ գործարքը համարել է կասկածելի: Եթե Ընկերության հաճախորդներին սպասարկող աշխատակիցը կարծում է, որ գործարքի իրականացումը պետք է կասեցվի կամ մերժվի, ապա մինչև գործարքի կատարումը ներքին դիտարկումների մարմնին բանավոր պետք է ներկայացնի այդ մասին իր առաջարկությունը:

- 11.6. Եթե ընկերության կողմից կատարվում է 11.3. կետերում նշված պահանջին բավարարող գործարք, ապա այդ գործարքը անմիջականորեն կատարած աշխատակիցը պետք է մինչև գործարքի կատարման օրվա ավարտը այդ մասին բանավոր կարգով հայտնի ներքին դիտարկումների մարմնին:
- 11.7. 11.6. կետում նշված դեպքում ներքին դիտարկումների մարմինը տեղեկանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնի սահմանած կարգով և ձևով կազմում և լիազոր մարմնին է ներկայացնում տվյալ գործարքի մասին հաշվետվություն:
- 11.8. 11.5. կետում նշված դեպքում ներքին դիտարկումների մարմինը տեղեկանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կանոնների 7-րդ բաժնում սահմանված ընթացակարգի կիրառմամբ կայացնում է գործարքը կասկածելի համարելու կամ չհամարելու մասին որոշում:
- 11.9. Եթե 11.8. կետում նշված գործողությունների արդյունքում ներքին դիտարկումների մարմինը հանգում է այն եզրակացությանը, որ գործարքը կասկածելի է, ապա լիազոր մարմնի սահմանած ժամկետում, կարգով և ձևով լիազոր մարմնին ներկայացնում է հաշվետվություն կասկածելի գործարքի մասին:

12. Արգելված գործողությունները

- 12.1. Ընկերությունում, ի լրումն ահաբեկիչների և ահաբեկչության հետ կապված անձանց հետ գործառնությունների իրականացման արգելքների, արգելվում է նաև.
 - 12.1.1. Բացել անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ,
 - 12.1.2. Բացել միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ,
 - 12.1.3. Գործառնություններ իրականացնել ըստ ներկայացնողի արժեթղթերով,
 - 12.1.4. Սպասարկել չլիցենզավորված բանկերին և ոչ բանկ ֆինանսական ինստիտուտներին (բացառությամբ, եթե նման լիցենզիա օրենսդրությամբ չի պահանջվում) կամ որևէ այլ գործառնություն ունենալ դրանց հետ,
 - 12.1.5. Սպասարկել կեղծ (շեյ) բանկերի կամ որևէ այլ գործառնություն ունենալ դրանց հետ,
 - 12.1.6. Որևէ գործառնություն ունենալ այնպիսի կազմակերպությունների հետ, որոնք ծառայություններ են մատուցում կեղծ (շեյ) կամ չլիցենզավորված բանկերին,

- 12.1.7. Սպասարկել չլիցենզավորված կամ չկարգավորվող դաշտում գործող դրամական փոխանցումներ իրականացնող գործակալների կամ համանման ծառայություններ մատուցող անձանց կամ որևէ այլ գործառնություն ունենալ դրանց հետ:

13. Աուդիտի իրականացումը

- 13.1. Ընկերությունը պետք է իրականացնի ներքին աուդիտ՝ հավաստիանալու համար, որ իր գործունեությունը համապատասխանում է Օրենքի, Կանոնների և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջներին:
- 13.2. Ընկերության գլխավոր տնօրենի կողմից տարեկան առնվազն մեկ անգամ նշանակվում է ստուգող անձ կամ ձևավորվում է ստուգման խումբ, որը ստուգում է իրականացում՝ հավաստիանալու, որ գործադիր մարմինը և ներքին դիտարկումների մարմինը ապահովում են Ընկերության լիարժեք համապատասխանությունը Օրենքով, Կանոներով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- 13.3. 13.2. կետում նշված խումբը պետք է կազմված լինի առնվազն երկու անդամից, որոնք պետք է լինեն Ընկերության աշխատակից, սակայն չլինեն գործադիր մարմնի, ներքին դիտարկումների մարմնի անդամ, կամ այնպիսի անձ, որն անմիջականորեն զբաղվում է Կանոններով սահմանված կարգով հաճախորդների նույնականացմամբ և նրանց ուսումնասիրությամբ:
- 13.4. 13.2. կետի պահանջների իրականացման արդյունքում ստուգող խմբի կամ անձի կողմից կազմվում է հաշվետվություն, որը ներկայացվում է Ընկերության գործադիր մարմնի հաստատմանը:
- 13.5. 13.2. կետի պահանջների իրականացման արդյունքում կազմված հաշվետվությունը պատշաճ կերպով ներկայացվում է լիազոր մարմնին՝ Ընկերության գործադիր մարմնի հաստատելուց հետո մեկշաբաթյա ժամկետում:
- 13.6. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արտաքին աուդիտի իրականացման ժամանակ աուդիտ իրականացնող կազմակերպությունը պետք է ուսումնասիրի նաև Ընկերությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության պահանջների ներդրումը և դրանց կատարման արդյունավետությունը:
- 13.7. Լիազոր մարմնի կողմից արտաքին աուդիտ իրականացնելու պահանջ ստանալու դեպքում Ընկերությունը մեկամսյա ժամկետում հրավիրում է արտաքին աուդիտ, որի եզրակացությունը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում տրամադրվում է լիազոր մարմնին: